



209. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԱՂՋԱՏԸ

Մի թագավոր փողոցում պատահում է մի աղքատի, որն իրենից ողորմություն էր խնդրում: Էս թագավորս աղքատին բերում է իր տունը, հինգ օր ժամանակ տալիս և նրան առաջարկում հետևալ հարցերը. որոշել՝ շատ է բարձր, արդյոք, երկինքը, շատ են խոր երկրի հիմքերը, և ի՞նչ արժեն իր՝ թագավորի զինը: Աղքատն ընկնում է թագավորի ոտները, աղաշում-պաղատում, որ իրեն խղճառ բաց թողնի, բայց չի լինում, թագավորը մնում է իր վճռին հաստատ:

Հինգ օր անընդհատ աղքատը ոչ ուսում է, ոչ խմում ոչ էլ քնում: Անընդհատ մտածում է, թե ինչ անի, որ ազատվի այդ սարսափելի դրությունից, ինչպես լուծի թագավորի խնդիրները, այլապես պետք է ճաշակի կախաղանի մահացու խրախնանքը:

Վերջապես անցնում է հինգ օրը, աղքատին տանում են կախաղանի մոտ, դալիս է թագավորը և հարցնում.

— Գտա՞ր, արդյոք, տվածս խնդիրների պատախանը, թե ուզում ես վիզդ մոմած թոկ գցենք:

— Գտա, տեր իմ,— զլուխս տալով խոսում է աղքատը:

— Ուրեմն ասա, խո՞րն է, արդյոք, երկրի հիմքերը,— հարցնում է արքան:

— Այս, տեր իմ, շատ է խոր:

— Ինչո՞ւ է խոր:

— Որովհետև հազարավոր տարիներ է, ինչ հարյուր հազար

միլիոնավոր մարդիկ են գնացել այնտեղ ու նրանցից ոչ մեկը չի վերադարձել, որովհետև շատ ու շատ խորն է նրա հիմքերը:

— Լա՛վ, — ասում է արքան, — իսկ բա՛րձր են, արդյոք, երկընքի բարձունքները:

— Ոչ շատ, — կրկին պատասխանում է աղքատը, — եթե շատ բարձր լիներ, մենք չէինք լսի որոտի ձենց, չէինք տեսնի կայծակի փայլը, և անձրնն ու ձյունը մեղ չէին հասնի:

— Լա՛վ, — գարձյալ ասում է թագավորը, — դու պատասխանեցիր երկու հարցերին, այժմ ասա, ի՞նչ արժեմ ես, ի՞նչ է իմ գինը:

— Զեր գի՞նը, տեր ա՛րքա, — գլուխ է տալիս աղքատը, Զեր գինը երեսուն ռուբլի է:

— Ինչո՞ւ, հիմար, — մոնղում է արքան կատաղած, — երեսուն ռուբլու մի անասուն չեն տա:

— Տե՛ր, հույները Թրիստոսին ծախեցին երեսունմեկ ռուբլու, դա նրա գինն էր, ես քեզ գնահատում եմ երեսուն, գոնե դու մեկ ռուբլով ցածր կլինես աստծու որդու գնից, — պատասխանում է աղքատը և հեռանում:

